


# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

(19 դեկտեմբերի 2018 թ., Սուրբ Էջմիածին)

*Սիրելինե՛ր,*

*Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում «Արարատ» ամսագրի հիմնադրման 150-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներիդ։ Այսօր դուք համախմբվել եք՝ ձեր զեկույցներով ու քննարկումներով վերարժեւորելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագրի նշանակալի վաստակն ու ժառանգությունը։*

*Երջանկահիշատակ Գեւորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք եւ նրա խրախուսմամբ հիմնադրված «Արարատ» ամսագիրը հարյուր հիսուն տարի առաջ կարեւոր առաքելության լծվեց ազգային-եկեղեցական մեր անդաստանում։ Ինչպես նշվում է ամսագրի առաջին համարի նախաբանում՝ «Արարատ»-ի հանձնառությունն էր կրոնական գիտելիքների մատուցմամբ, ներկայացվող ուսումնասիրություններով եւ հոդվածներով նպաստել ազգի բարոյական ու հոգեւոր դաստիարակությանը։ Ամսագիրը կարեւոր ներդրում ունեցավ հայ աստվածաբանական մտքի, հայագիտության ու պատմաբանության զարգացման գործում։ Մեծանուն հոգեւորականներից Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի գլխավորությամբ նոր սերնդի հոգեւորականները, Եւրոպայում կրթություն ստացած երիտասարդ եկեղեցականները հանդես եկան դավանաբանության, ինչպես նաեւ ընդհանուր աստվածաբանության վերաբերյալ գիտական լուրջ հոդվածներով, նշանավոր աստվածաբանների աշխատությունների թարգմանություններով։ «Արարատ»-ի էջերում հիշարժան վաստակ թողեցին նաեւ նշանավոր հայագետները։ Ամսագրի մեծարժեք նյութերի ցանկը հարստացրել են ձեռագրագիտության,*

*մանրանկարչության, համեմատական բնագրերի, արվեստի ու մշակույթի վերաբերյալ հրապարակումները։ Դեռեւս այդ շրջանում, երբ Մայր Աթոռի պաշտոնական գրություններում գլխավորապես գրաբարի գործածումն էր սահմանված, «Արարատ» ամսագրի համար նախընտրելի համարվեց գրաբարին մերձ աշխարհաբարի գործածումը, որպեսզի այն ընթերցողների ավելի լայն շրջանակին հասու լինի։*

*Հատկանշական է նաեւ, որ «Արարատ» ամսագիրը լույս էր տեսնում այնպիսի մեծանուն հոգեւորականների խմբագրությամբ, որպիսիք էին Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանը, Խորեն վարդապետ Ստեփանեն, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը եւ ուրիշներ։ Մեր խորին հարգանքն ու խոնարհումն ենք բերում երանաշնորհ Գեւորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ամսագրի վաստակաշատ խմբագիրների եւ «Արարատ»-ի բոլոր երախտավորների լույս հիշատակի առջեւ։ Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ հրատարակվող նյութերի հատուկ ընտրությամբ «Արարատ» ամսագիրը դարձավ այդ ժամանակաշրջանում Կովկասում առաջին գիտական լուրջ հանդեսը, որի շուրջ համախմբված հայ աստվածաբան հոգեւորականները, գիտնականները, գրողները կարեւոր ավանդ բերեցին գիտության ճյուղերի զարգացմանը։ Այսօր էլ «Արարատ» ամսագրի գիտական հարուստ նյութերը, նաեւ կաթողիկոսական կոնդակների ու կարգադրությունների, Սինոդի գրագրությունների, թեմերի, գաղթավայրերի, ազգագրության վերաբերյալ տեղեկությունները օգտաշատ գիտելիքների աղբյուր են ընթերցողների եւ ուսումնասիրողների համար։*

*Սիրելինե՛ր, Հայրապետական Մեր գնահատանքն ենք հայտնում ձեզ բոլորիդ, մասնավորապես «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրենությանը եւ այս ձեռնարկի իրականացմանը բարի նպաստ բերած բոլոր անձանց։*

*Մաղթում ենք, որ նման միջոցառումները առատ արգասիքներով արդյունավորվեն հոգեւոր-եկեղեցական մեր կյանքի անդաստանում, գիտության եւ իմացության կաճառում։*

*Վերստին Հայրապետական Մեր օրհնությունը բերելով՝ հայցում ենք Տիրոջ օգնականությունը ձեզ գիտական բեղուն աշխատանքով նորանոր հաջողություններ կերտելու ճանապարհին։*

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհնեռն ու ողորմությունը թող միշտ լինեն ձեզ եւ ամենքի հետ. ամեն։